

ՀԱՐԴ

239(47.925)


MR 2011

Դեկտեմբեր 6  
որոշումների համար  
1923թ

№ 1 - 10

277 օրինակ շրջան

1,234-10



338(47.925)

30 MAR 2013

Հ. Ա. Խ. Հ.

ՀՈՒՆ 2013 թ. 1 առ 10

# ԴԵԿՐԵՏՆԵՐԻ ՅԵՎ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ

1923

ՀՈՒՆՎԱՐ 31

№ 1

## ՑԱՆԿ

- 4924
- Պատասխանատու աշխատակիցների աշխատավարձի լրացուցիչ հավելման մասին.
  - Յերևան և Ալեքսանդրապոլ քաղաքներում միանվագ ընդհանուր բաղաքացիական հարկ սահմանելու մասին.
  - Մի ընդհանուր Անդրկովկասյան դրամանիշ բաց թողնելու մասին.
  - Անդրկովկասյան միասնական դրամանիշներով հաշվարկություն սահմանելու մասին.
  - Բիբլոպեդաֆիտկան գործը Լուսմողկոմատին հանձնելու մասին.
  - Հոգուտ Հայաստանի նարմիր Խաչի դանձվելիք տուրքի մասին.
  - Պետական հիմնարկությունների և ձեռնարկությունների դրամարկղային գործառնությունների մասին.
  - Հայկոսափ և բանվորական կոոպերացիայի Սեկցիայի միացման մասին.
  - Եջմիածնի վանական թանգարանի պետականացման մասին.
  - Հարկերն ու տուրքերը գանձելու մասին.

## ՎՈՐՈՇՈՒՄ

Հ. Ա. Խ. Հ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՄԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

1922 թ. Դեկտեմբերի 27

Ի լրումն պատասխանատու աշխատակիցների աշխատավարձի վերաբերյալ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1922 թ. Դեկտեմբերի 5-ի՝ Պարոշման՝ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշեց

1. Պատասխանատու աշխատակիցների համար, վորոնք ծառարությունից ազատ ժամանակի իրենց պաշտոնի բնույթի համեմատ

դանագան աշխատանքներ են՝ կատարում, վոր հաշվի առնել չի կարելի, սահմանել լրացուցիչ հավելում մինչև իրենց հիմնական ոռակի 50 տոկոս, ըստ այս ցանկի:

10	կարգի համար	10 տոկ.
11	»	15 »
12	»	20 »
13	»	25 »
14	»	30 »
15	»	40 »
16	»	45 »
17	»	50 »

2. Հիմնարկության կամ կազմակերպության ղեկավար մամուն բացառիկ գեպքերում իրավունք ե վերապահվում չ. Ա. Մ. Խ. և նրա տեղական մարմինների համաձայնությամբ՝ ավելացնելու կամ պակասացնելու ուժն վորոշման 1 հոդ. մասնանշված հավելման տոկոսները առանձին աշխատավորների համար, ի նկատի ունենալով նրանց ծանրաբեռնված լինելը և աշխատանքի բնույթը, սակայն պայմանով, վոր հիշյալ տոկոսները նրանց հիմնական ոռճիկի կոպարի 50 տոկոսիցն ավելի չլինին:

3. Տոկոսահաշվով արած հավելումը միջին առմամբ ավելի պիտի չինի Հանրապետության կենտրոնական հիմնարկությունների և կազմակերպությունների համար տվյալ հիմնարկության կամ կազմակերպության պատասխանատու աշխատակիցների աշխատավարձի ամբողջ գումարի 40 տոկոսից, գավառների համար 30 տոկոսից, գավառակների համար 20 տոկոսից և գյուղերի համար 10 տոկոսից:

4. Սույն վորոշումը գործադրելի յէ տարվույս Դեկեմբերի 1-ից:

Ժողովրդական կոմիսարների Խորհրդի նախագահի տեղակալ՝ Ա. Մուսյան

Ժողովրդական կոմիսարների Խորհրդի քարտուղար՝ Գ. Պարզյան

Հ. «Խորհրդային Հայաստան»  
1923 թ. Հունվարի 1, № 1

## ԴԵԿԵΜԲԵՐ

№ 2 Հ. Ա. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՒ

Յերեան և Ալեքսանդրապոլ քաղաքներում միանվագ ընդհանուր քաղաքացիական դրամական հարկ սահմանելու մասին.

1922 թ. Դեկտեմբերի 27

1. Յերեան և Ալեքսանդրապոլ քաղաքներում միանվագ ընդհանուր քաղաքացիական դրամական հարկ սահմանել 1923 թվի համար:

2. Հիշյալ հարկը գանձել բոլոր վճարելու կարողություն ունեցող քաղաքացիներից:

3. Հարկից ազատվում են.

ա) Տարիփային 17 կարգանոց տախտակի վոչ ավելի քան 12 կարգով ոռճիկ ստացող բանվորներն ու ծառայողները, յեթե յեկամուտի այլ աղբյուրներ չունի:

բ). Զօրաշարքերում և շարքերից դուրս յեղած դինվորական ծառայողները:

գ). Այն կանայք, վորոնց խնամքի տակ մինչև 14 տարիք ունեցող մեկ և ավելի յերեխաններ կամ ընտանիքի այլ անաշխատունակ անդամներ կան:

4. Հարկի չափերը սահմանվում են ըստ խմբերի.

ա). Անձնական ոռճիկ ստացող ծառայողների, ազատ արհեստի տեր քաղաքացիների համար, այն և պաշտոն չունեցող բժիշկների, ատամաբրուժների, պաշտպանների կոլեգիայի անդամների, բնժիշկների, տեխնիկների և այլն արհեստավորների, տնախագործների և այլ մանր առևտնականների և արդյունաբերողների համար, վոր վարձու աշխատանք չեն ոգտագործում և 1 ու 2 կարգ պատեհատ են վերցնում — 10,000,000 ռուբլի հայկական խորհրդական դրամանիշերով:

բ). 17 կարգանոց տախտակով ոռճիկ ստացող բանվորների և ծառայողների համար՝ 5,000,000 ռուբլի հայկական խորհրդային դրամանիշներով:

գ). Առևտնական և արդյունաբերական ձեռնարկությանց տերերի և առևտուղ, հանձնակատարությամբ, միջնորդությամբ, կապահներով, և մատակարարությամբ պարապող-

Քաղաքացիների համար՝ 100,000,000 մելքոն ռուբլի հայկական խորհրդային դրամանիշներով:

դ). Բոլոր մասցյալ քաղաքացիների համար՝ 5,000,000 ռուբ-  
լի հայկական խորհրդաշյան զբամանիչներով:

5. Այն հարկ վճարողներից, վոր մի քանի խմբի են պատկանում, հարկից դանձվում ե բարձրագույն խմբի հաշվով:

6. Հարկը պիտի վճարվի 1923 թ. Հունվարի 30-ից վոչ ուշ:

7. Սույն տեկրեալ խախտողները պատասխանառության են յենթարկվում Քրեական Որենսզրքի 70-րդ հոդ. համաձայն:

8. Հանձնարարել Հայաստանի Սոցիալիստական Խորհրդավոր Հանրապետության Անդրկովկասի Ֆինժուղկոմի լիազորին՝ հրահանգ հրատարակել սույն զեկրետի կիրարկության համար:

Կենդրոնական Գործադիր Կոմիտեի Նախագահ

Տեղակալ՝ Ա. Կարինյան

Կենդրունական Գործադիր Կոմիտեի Քարտուղար՝ Հ. Տասյան  
Հր. «Խորհրդային հալաստան»

1923 J. Zool. 4, N 2

ԳՈՐԾՈՒՄ

Հ 3 4. Ա. Խ. 3. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՃՐՁԵ.

1923 թ. Հունիսի 10

Անդրկովկասի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության Խորհրդի մի ընդհանուր Անդրկովկասյան դրամանիշը բաց թողնելու վերաբերյալ 1923 թ. Հունվարի 10-ի գելրեալ ի գիտություն հանրության և ի կիրարկություն հրապարակելու մասին:

Հնդ սմին հրապարակվում ե ի գիտություն հանրության և ի կիրարկություն, Անգրկովկասի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության Խորհրդի 1923 թ. Հունվարի 10-ի դեկրետը «Մի ընդհանուր Անգրկովկասյան դրամանիշ բաց թողնելու մասին»:

Ժողովրդական կոմիսարների Խորհրդի Նախագահի  
տեղակալ՝ Ա. Մոռովյան

**Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի  
քարտուղար՝ Գ. Պարզյան**

ՀՐ. «Խորհրդային Հայաստան»  
1923 թ. Հունվարի 11, № 8

7-64 R-68

ԱՆԴՐԱԿՈՎԿԱՍԻ Ա. Խ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ

ՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԴՐԱՄԱՆԴՇ ԲԱՑ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

10 Հունիսի 1923 թ.

Ֆեղերատիվ Խորհրդային Համբապետությունների Անդրկով-  
կասյան Միությունն ստեղծող Անդրկովկասյան Հանրապետու-  
թյունների անտեսական վիճակի առավել և ամրապնդելու և  
Անդրկովկասյան Ֆեղերացիայի ու սոցիալիստական Խորհրդային  
Հանրապետությունների Միության միջև անտեսական սերտ կա-  
պեր հաստակելու նպատակով Միության Խորհուրդը վորոշեց.

1. Սաեղծել Անդրկովկասի սահմաններում մի Ընդհանուր գրամական սխալում 1923 թ. Հունվարի 10-ից:

2. Բաց թողմելի կ զքշանառություն մի ընդհանուր Անդր-  
կովկասյան դրամանից 1,000, 5,000, 10,000, 50,000, 100,000,  
500,000 և մի միլիոնանոց, Վրաստանի դրամանիշների արժեքով:  
Անդրկովկասի դրամանշի մեկ սուբլին հավասար է Վրաստանի  
դրամանշի սուբլին:

3. Աղբքեջանի գրամանիշների վերաբերությամբ Անդրկովկասի գրամանշի մեկ ռուբլին հավասարեցվում է Աղբքեջանի 100 ռուբլուն, իսկ Հայաստանի գրամանիշների վերաբերությամբ, Անդրկովկասի գրամանիշների մեկ ռուբլին հավասարեցվում է Հայկական 150 ռուբլուն։ Կուրսի այս լիկվիդացիան անփոփոխ մնում է փոխանակության ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում։

4. Անզրկովկասի մի ընդհանուր գրամանիշը շրջանառություն ունի Անդրկովկասի սահմաններում ամենուրեք, և բոլոր պետական հիմնարկություններն ու ձեռնարկությունները, հասարակական կազմակերպությունները և մասնավոր անձինք պարտավոր են այն ընդունել և մեջացնել:

5. Անդրկովկասի մի ընդհանուր դրամանիշը ի շրջանառություն բաց թողնելու որից, այն և 1923 թ. Հունվարի 10-ից դադարեցնել Վրաստանի, Ալբրեծանի և Հայաստանի անկախ եմիսարաները:

6. Վրաստանի, Ալբրեծանի և Հայաստանի տեղական դրամանիշները շրջանառության մեջ մնում են միայն յերկու ամսվան ընթացքում, Անդրկովկասի դրամանիշներն ի շրջանառություն բաց թողնելուց հետո, այն և մինչև 1923 թ. Մարտի 10-ը:

Այդ ժամանակամիջոցում տեղական դրամանիշները պիտի փոխանակվին Անդրկովկասի դրամանիշների հետ, սույն գեկրետի 2 և 3 հոդվածներում մատնանշված կուրսով, Անդրկովկասի ֆեղերացիայի բոլոր կառավարական գանձարկղներում, Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. պետական բանկի կանոորներում և բաժանմունքներում, ինչպես նաև Հանրապետությունների տեղական բանկերում:

7. Մինչև 1923 թ. մարտի 10-ը չփոխանակված տեղական դրամանիշները կորցնում են իրենց վճարողական ույժը և չեն ընդունվի պետական հիմնարկություններում ու ձեռնարկություններում, ինչպես նաև բանկերում վոչ վճարելու և վոչ փոխանակելու համար:

8. Անդրկովկասի մի ընդհանուր դրամանիշը ապահովում է Ա. Ս. Ֆ. Խ. Հանրապետությունների Միության ամբողջ զույքով և նրա կեղծողները կյենթարկվեն քրեական պատասխանատվության:

9. Սույն գեկրետի կիրարկությունը հանձնել Ա. Ս. Ֆ. Խ. Հանրապետությունների Միության ֆինանսների Փողովրդական Կոմիսարին և իրավունք տալ նրան պատշաճ հրահանդիներ հրաժարական ի զարգացումն սույն գեկրետի:

10. Սույն գեկրետը գործադրելի յէ հրապարակելու որից:

Ա. Ս. Ֆ. Խ. Հանրապետությունների Միության Խորհրդի Նախագահություն՝ Նարիմանով, Ելիտար, Միասնիկյան

## Վ Շ Ո Բ Ո Շ Ո Ւ Մ

Հ. Ա. Խ. Հ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՃՐԴԻ

1923 թ. Հունվարի 10

Անդրկովկասի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետու-

թյունների Միության Խորհրդի Անդրկովկասյան միասնական դրամանիշներով հաշվարկություն սահմանելու վերաբերյալ 1923 թ. Հունվարի 10-ի գեկրետը ի գիտություն հանրության և ի կրարկություն հրապարակելու մասին:

Ըստ սմին հրապարակվում ե ի գիտություն հանրության և ի կրարկություն՝ Անդրկովկասի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության Խորհրդի 1923 թ. Հունվարի 10-ի գեկրետը՝ «Անդրկովկասյան Միասնական դրամանիշներով հաշվարկություն սահմանելու մասին»:

Փողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահի

տեղակալ՝ Ա. Մալյան

Փողովրդական Կոմիսարների Խորհրդի Քարտուզար՝ Գ. Պարզյան

Հր. «Խորհրդային Հայաստան»

1923 թ. Հունվարի 12, № 9

## Դ Ե Կ Բ Ե Տ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՃՐԴԻ

10 Հունվարի 1923 թ.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՆԻՇՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի լրումն մի ընդհանուր Անդրկովկասյան դրամանիշը բաց թողնելու վերաբերյալ սույն թիվ գեկրետի՝ Միության Խորհրդությունը վորոշեց:

1. Սահմանել վոր սույն գեկրետը հրապարակելու որվանից Ա. Ս. Ֆ. Խ. Հանրապետությունների Միության սահմաններում գլուխող բոլոր կառավարական հաստատություններում, պետական ձեռնարկություններում, հասարակական և կոոպերատիվ կազմակերպություններում ամբողջ հաշվետվությունը, այլ և պայմանագրներ կնքելիս ու բոլոր ընթացիկ գործարքների հաշվարկությունը տեղի ունենա Անդրկովկասի Փեղերացիայի նոր դրամանիշներով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.՝ Անդրկովկասյան դրամանիշներին անցնելը պարտադիր և հիշյալ հաստատությունների համար այն բոլոր դեպքե-

բում, յերբ ոեփորմը գործադրելու պահուն իբրև հիմք են ընդունվել Անդրկովկասյան Հանրապետությունների հին զբամանիշները:

2. Մինչև 1923 թ. Հունվարի 10-ը կնքված բայց չկատարված պայմանագրները ու գործարքները նույն են իրենց ույժի մեջ իրավունք վերապահելով համապատասխան հաշիվները տեսնելու Անդրկովկասյան նոր զբամանիշներով:

ԵԱՆՈՒԹՅՈՒԹՅՈՒՆ.—Ցերկու ամսի լրանալուց հետո, բոլոր գործաքներն ու պայմանագրները, վոր կնքված են տեղական զբամանիշներով, պիտի ուղարկացիայի յենթարկվեն բացառապես Անդրկովկասյան զբամանիշներով:

3. Անդրկովկասի Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատը շահագրգուված հիմնարկություններին ու կազմակերպություններին տալու յն պատշաճ բացարձություններ, սույն վորոշման կիրարկության մասին:

Միության Խորհրդի Նախագահ՝ Շ. Ելիավա  
Փոխ-Քարտուղար՝ Առլով-Մալախով

#### 4. Ս. Խ. Հ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՃՐԴԻ

#### Դ Ե Կ Բ Ե Տ

№5 ԲԻԲԼԻԳՐԱՖԻԱԱՆ ԳՈՐԾԸ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.  
1922 թ. Դեկտեմբերի 27.

1. Քիրլիովրաֆական զործը Հ. Ս. Խ. Հ. սահմաններում հանձնվում է Հուստողկոմատին:

2. Հուստողկոմատի վրա պարտականություն և դրվում ցուցակին Հանրապետության սահմաններում լույս տեսնող մամուռ բոլոր արտադրությունները և հրատարակել նրանց ցուցակները:

3. Հուստողկոմատը աշակցում է քիրլիովրաֆիայի զարգացմանը և այդ նպատակով հիմնում է Ցերեանում գրքերի Տուտարագրության պահան, բայց և անում քիրլիովրաֆիական մատենադարաններ և հրատարակում և քիրլիովրաֆիական խնդիրներին վերաբերող գրքեր ու պարբերականներ:

4. Հուստողկոմատը պարտադիր վորոշութիւնը և հրատարակում մամուռի նոր լույս տեսնող արտադրություններից պետական և այլ զբարաններին ձրիաբար մատակարարելու մասին, և վորոշում և թե վոր գրադարաններին պիտի տրվեն այդպիսիները:

5. Այս գեկրեալ կիրարկելու համար Հուստողկոմատը հրատարակում ե պարտադիր վորոշութիւնները, վորոնց խախտողները պատասխանատվության են յենթարկվում Ժողովրդական Դատարանի վրձով:

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահի  
տեղակալ՝ Ս. Մոավյան

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի  
Քարտուղար՝ Գ. Պարզյան

Հր. «Խորհրդային Հայաստան»  
1923 թ. Հունվարի 13, № 10

#### Դ Ե Կ Բ Ե Տ

#### 4. Ս. Խ. Հ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՃՐԴԻ

№6 ՀՈԳՈՒՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԱՆՁՎԵԼԻՔ  
ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ.

1922 թ. Դեկտեմբերի 27

1. Հոգուտ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության կարմիր խաչի ընկերության գանձել՝

ա) Ցուրաքանչյուր արտասահմանյան անցաթուղթ վերցնողից՝ անձաթղթի խկական արժեքի  $15^{\circ}/\text{o}$ -ը;

բ) Վճարովի մուտք ունեցող զվարճության բոլոր տեղերի, (թատրոն, ցիրկ, կինո) մուտքի վճարի  $2^{\circ}/\text{o}$ -ը;

2. Հանձնարարել Ֆինանսների Ժողովրդական կոմիսարին՝ հրահանող հրատարակել սույն դեկրետի կիրարկության մասին:

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահի  
տեղակալ՝ Ս. Մոավյան

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի  
Քարտուղար՝ Գ. Պարզյան

Հր. «Խորհրդային Հայաստան»  
1923 թ. Հունվարի 13, № 10

## Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հ. Ա. Խ. Հ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՃՐԴԻ

1923 թ. Հունվարի 12

Անդրկովկասի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության Խորհրդի «Պետական ձեռնարկությունների և հիմնարկությունների զբամարկղային գործառնությունների վերաբերյալ» 1923 թ. Դեկտեմբերի 25-ի վորոշումն ի գիտություն հանրության և ի կիրարկություն հրապարակելու մասին:

Ըստ սմին հրապարակվում են ի գիտություն հանրության և ի կիրարկություն, Անդրկովկասի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության Խորհրդի 1922 թ. Դեկտեմբերի 25-ի վորոշումը՝ «Պետական հիմնարկությունների և ձեռնարկությունների զբամարկղային գործառնությունների մասին»:

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահի  
տեղակալ՝ Ս. Խոսկյան

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի  
Քարտուղար՝ Գ. Պարզյան

Հր. «Խորհրդային Հայաստան»  
1923 թ. Հունվարի 14, № 11

## ԱՆԴՐԿՈՎԿԱՆ Ս. Խ. ԳԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՃՐԴԻ

Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ № 66

ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԶԵՐՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐԱ-  
ՄԱՐԿՂԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1922 թ. 25 Դեկտեմբերի

Դրամական արժանառությունը կարդավորելու նպատակով  
Միության Խորհրդը վորոշեց.

1. Անդրկովկասի Ֆեդերացիայի սահմաններում գտնվող  
բոլոր պետական ձեռնարկություններին ու հիմնարկություններին  
առանց բացառության՝ բացարձակագործես արդելվում են իրենց զբա-  
մարկղներում իրենց ընթացիկ ծախսերը հոգալու չափիցն ավելի  
գումարներ պահելը:

ՇԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Դրամարկղներում պահելու դրամանիշների  
գումարի թույլատրելի չափը սահմանում է վարկերի համա-  
պատասխան անորինող՝ ֆինանսների Ժողովրդական Կոմի-  
սարիաի մարմինների համաձայնությամբ:

2. Իրենց բոլոր վճարումները, վոր սույն վորոշման 1 հոդվա-  
ծի համաձայն իրենց ծախսերն հոգալու համար չեն, պետական  
ձեռնարկություններն ու հիմնարկություններն իրավունք չունին  
անելու իրենց դրամարկղներում յեղած կանխիկ զբամանիշներով,  
այլ պարտավոր են անել Անդրկովկասիան Ֆեդերացիայի սահման-  
ներում գործող սփետական վարկային հիմնարկությունների ձեռքով  
չեկերի փոխազրության, վճարման զանազան տեսակ հանձնարա-  
ռությունների, ակլիքեղիտիվների և այլն կարգով:

3. Բոլոր պետական հիմնարկություններն ու ձեռնարկություն-  
ները միմիանց հետ ունեցած փոխադարձ հաշիվները, պետական  
վարկային հիմնարկություններում իրենց ունեցած գումարների  
սահմաններում, տեսնում են այդ բանկերի ձեռքով մի հաշվոց  
միուսին փոխանցելով և կամ չեկերի կամ փոխադրական գործառ-  
ությունների միջոցով:

4. Պետական ձեռնարկությունների և հիմնարկությունների  
բոլոր հաշիվներով ունեցած գումարների համար բանկերը վերա-  
դիր են վճարում իրենց սահմանած տոկոսը:

5. Բոլոր պետական ձեռնարկություններն ու հիմնարկություն-  
ները պարտավոր են մի շաբաթվան ընթացքում իրենց դրա-  
մարկղներում յեղած զբամանիշները, բացի սույն վորոշման 1  
հոդ. հիշտակված գումարներից, հանձնել պետական վարկային  
հիմնարկություններին ընթացիկ հաշվով. իսկ վոսկով և ոտարյեր-  
կրյա մետաղի կամ թղթի վալյուտայով յեղած պատրաստի զբա-  
մը պարտավոր են հանձնել ընթացիկ հաշվով անպայման ամբողջո-  
վին, և հաշվարկությունը — բացառապես արտասահմանյան գոր-  
ծառնությունների և հարաբերությունների նկատմամբ — կատարել  
այս մասին յեղած վորոշումների հիման վրա և սույն վորոշման  
2 և 3 հոդ. մասնանշված կարգով:

ՇԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Պետական վարկային հիմնարկությունները  
իրենց ընդունած բոլոր գումարները, թե դրամանիշներ և թե  
ոտարյերկրյա վալյուտա, գումար են ընթացիկ հաշիվներով նույն  
վալյուտայով, վարով վոր ընդունել են, և սույն վալյուտայով  
հիշտ հաշիվներն են տեսնում և վճարութերը կատարում

հարկ յեղած պարագային, միանգամայն անարգել կերպով, տերի առաջին խոկ պահանջմամբ:

6. Բոլոր հիմնարկություններն ու ձեռնարկությունները սույն վորոշումը հրատարակելու որից հետո յերեք որվան ընթացքում պարտավոր են ճիշտ տեղեկություն տալ Անդրկովկասի Միության ֆինանսների ժողովրդական Կոմիսարիատին և նրա տեղական մարմիններին իրենց գրամարկների մնացորդների մասին:

7. Ֆինանսների և Բանվորա—գյուղացիական տեսչության փողովրդական կոմիսարիատներին հանձնարարվում և հսկողություն ունենալ սույն վորոշման գործադրության վրա և ստուգել առանձին հիմնարկությունների կողմից նրա ճշտությամբ ի կատար ածելը:

8. Սույն վորոշումը խախտողները յենթարկվում են քրեական պատասխանատվության:

9. Սույն վորոշման հրատարակությամբ՝ չնշվում են Անդրկովկասի հանրապետություններում այս մասին յեղած բոլոր վորոշումներն ու կանոնները:

10. Սույն վորոշումը գործադրելի յէ հրապարակվելու որից:

Անդրկովկասի Ա. Խ. Հանրապետությունների Միության  
Խորհրդի Նախագահ՝ Յ. Ելիափա

Միության Խորհրդի փոխ—Քարտուզար՝ Ուլով — Մալախով

## Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Թ

Հ 8 4. Ա. Խ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

1923 թ. Դեկտեմբեր 5,

Ի փոփոխություն և ի լրումն Հայկոսպի բանվորական կոոպերացիայի Սեկցիայի 1921 թ. Դեկտեմբերի 24-ի կանոնադրության՝ ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշեց.

1. Միացնել Բանկուաների կենտրոնական վարչությունը Հայկոսպի հետ՝ հետեւյալ հիմունքներով.

2. Հայկոսպն ու նրա բանվորական կոոպերացիայի Սեկցիան մի ընդհանուր վարչություն ունին 7 անդամի կազմով՝ 4-ը՝ ընդհանուր քաղաքացիական կոոպերացիայի և 3-ը՝ բանվորական կոոպերացիայի Սեկցիայի կողմից:

3. Միացյալ վարչությունը իր կողմից նախագահություն և ընտրում յերեք անդամից բաղկացած—յերկուսը՝ ընդհանուր քաղաքացիական կոոպերացիայի և մեկը՝ Բանվորական կոոպերացիայի Սեկցիայի կողմից:

4. Բանվորական կոոպերացիայի Սեկցիայի ներկայացուցիչը նախագահության մեջ՝ միաժամանակ Հայկոսպի փոխնախագահն եւ:

5. Բանկուաների բոլոր հիմնարկությունները, արժեթղթերն ու գումարները (ակտիվ և պասսիվ) անցնում են Հայկոսպի տեսչության տակ, բայց Բանվորական կոոպերացիայի Սեկցիային և մնում նրանց սեփականության իրավունքը:

6. Հայկոսպի վարչությունը բանկուաների արժեթղթերի և գումարների առանձին հաշիվ եւ պահում:

7. Հայկոսպի վարչությունը բանվորական Սեկցիայի հանձնարարություններով առաջին անհրաժեշտության առարկաներ և մատակարարում բանվորական կոոպերացիայի անդամներին, ըստ սահմանված ծրագրի:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ**. 1.—Բանվորական կոոպերացիայի անդամներին մթերքները մատակարելու ծրագրները մշակում եւ բանվորական Սեկցիան, միացման ժամանակ մտցրած դրամագլխից վոչ պակաս սահմաններում և ներկայացնում և Հայկոսպի վարչությանն ի հաստատություն:

2.—Բանվորական կոոպերացիայի Սեկցիային իրավունք և վերապահվում հոկողություն ունենալու իր հանձնարարությունների իրազորման վրա:

8. Բանկուաների և Հայկոսպի գավառական, գավառակային և գյուղական բաժանմունքների վերակազմությունն ու միացումը կատարվում եւ սույն վորոշմամբ սահմանված հիմունքներով:

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ**

Ա. Մրապիոնյան (Լուկաշին)

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ Խորհրդի Քարտուզար՝ Գ. Պարզյան

ՀԲ. «Խորհրդային Հայաստան»

1923 թ. Հունվարի 14, № 11

## Դ Ե Կ Բ Ե Տ

Հ. Ա. Խ. Հ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՃՐԴԻ

№ 9 ԵԶՄԻԱԾՆԻ ՎԱՆԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՊԵՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ.

1923 թ. Հունվարի 24,

Նկատելով, վոր Եջմիածնի վանական միաբանության ներքո գտնվող թանգարանը իր հսագիտական, դրամադիտական, աղջազրական և գեղարվեստական ժողովածուներով պահվել և ցարդ անխնամ վիճակում և չի ոգտագործվել գիտական և լուսավորական նրապատակներով, և վոր վանական միաբանությունը առաջիկայում ես ի վիճակի չպահպան լինի կարգավորել ու լրացնել թանգարանային այդ ժողովածուն գիտության պահանջների համաձայն, դարձնել այն գիտական ուսումնասիրությունների նյութ ու ժողովրդական լայն մասսաների լուսավորության միջոց.

Ժողովրդական կոմիսարների Խորհուրդը վորոշեց.

1. Պետականացնել Եջմիածնի վանական թանգարանը և հանձնել Լուսժողկումի վարչության:

2. Հրանտնդել Լուսժողկումին թանգարանի առաջիկա ոգտագործման յեղանակների մասին մշակել հատուել հրանտդ և ներկայացնել ժողովրդական կոմիսարների Խորհրդին՝ ի հաստատություն: Ժողովրդական կոմիսարների Խորհրդի

նախագահ Ա. Մրապիոնյան (Լուսաւորի)

Ժողովրդական կոմիսարների Խորհրդի  
քարտուղար՝ Փ. Պարզուան

Հր. «Խորհրդային Հայաստան»

1923 թ. Հունվարի 26, № 17

Հ. Ա. Խ. Հ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՃՐԴԻ

## Վ Ո Ր Ռ Շ Ո Ւ Ե Մ

№ 10 ՀԱՐԿԵՐՆ ՈՒ ՏՈՒՐՔԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1923 թ. Հունվարի 11

1. Թե պետական և թե տեղական բոլոր հարկերի և տուրքերի գանձումը հանձնել ներքին Գործերի ժողովրդական կոմիսար-

իատին և նրա տեղական մարմիններին:

2. Հիշյալ հարկերի և տուրքերի գանձման վրա հսկողություն ունենալը հանձնել Անդրկովկասի Ֆիսանսների ժողովրդական կոմիսարի լիազորին և նրա տեղական մարմիններին:

## ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

3. Վճարման պայմանաժամը անցնելուց հետո, Անդրկովկասի Ֆիսանսների ժողովրդական կոմիսարի լիազորի վարչության ելեկ մըտական զրամարկը կամ տեղական գավառական ֆինբաժինը չմուծված հարկի կամ տուրքի դումարը գրվամ և վորպես ապառիկ, վոր պետք ե վճարվի յուրաքանչյուր հարկի վերաբերյալ կանոններով վորոշված տուգանքը վրան ավելացնելով:

4. Դրամական հարկերի և տուրքերի ապառիկները գանձվում են անվիճելի կարգով:

5. Գանձման հարկադիր միջոցներն են.

ա). Գանձումն անել այն դումարներից, վոր տպառիկ ունեցող հարկատուն պիտի ստանա յերբորդ անձերից, վորոնց թվում նաև խորհրդային հիմնարկություններից:

բ). Արձանագրել և կալանքի տակ առնել ապառիկ ունեցող հարկատուրի շարժական գույքը, բացի 6 հոգվածում թվածներից ու վաճառել արձանագրված ու կալանքի տակ առնված գույքը աճուրդով, վաճառումից ստացված գումարները հատկացնելով ապառիկն ու տուգանքը վճարելու համար:

Վաճառելի առարկաների ընտրության իրավունքը պատկանում է ապառիկ ունեցողին:

գ). Շարժական գույք մինելու կամ ապառիկն ու տուգանքը վճարելու համար չբավելու պարագային՝ գանձումն արվում և գույքը յեկամուտներից:

6. Արձանագրելի և վաճառելի չե ապառիկ ունեցողի հետեւյալ դույքը.

ա). Զմեռային և ամառային անհրաժեշտ հագուստը, սպիտակեղենը, վոտնամանները և տնային այլ անհրաժեշտ առարկաները:

բ). Ռւտեստեղենը ընտանիքի անդամներին թվի համեմատ, վեց ամսվա համար անհրաժեշտ քանակությամբ:

գ). Վառելիքը կերակուր յեփելու և բնակարանը տաքացնելու վեց ամսվա համար անհրաժեշտ քանակությամբ:

դ). Արտադրության միջոցներն ու գործիքները, վոր անհրաժեշտ են ապառիկ ունեցողի պրոֆեսիոնալ զբաղմունքի կամ արհեստի համար, յեթե նրանք ապրուստի համար են և վոչ աշխատանք շահագործելու:

Ե). Յերկրագործական և արհեստի գործիքները, վոր անհրաժեշտ են տնտեսություն պահպանելու համար, մի կով, յերկու ձի, կամ սրանց փոխարինող այլ կենդանիները և նրանց համար անհրաժեշտ վեց ամսվա ճարակը:

Պ). Սերմացուն ապառիկ ունեցողի ձեռքով մշակվող հողը սերմանելու համար անհրաժեշտ քանակությամբ:

Ե). Զհավաքած բերքը:

7. Արձանագրված գույքը գանձող մարմինը վաճառում և առողջով, համաձայն Անգրկովկասի Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարի լիազորի և Արդարադատության Կոմիսարիատի համաձայնությամբ հաստատված կանոնների:

8. Գանձող մարմիններին ճ հոդ-ի ա) կետում մատնանշված գումարների մասին տեղեկություն տալուց խուսափողները կամ նույն բանի, այլ և հարկ չվճարողների գույքի մասին ակնհայտնի սուտ տեղեկություն տվողները, բացի քրեական պատասխանատվությունից, յենթարկվում են քաղաքացիական պատասխանատվության, պետության կրած վնասների համար:

9. Ապառիկ ունեցողին կամ հատուկ նշանակված անձի պահ տված արձանագրված գույքի վասնումը պատժվում և Ժողովրդական դատարանի կողմէց վորագես պետական գույքի վասնում:

10. Գանձող մարմինների անկանոն գործողությունների և կարգադրությունների դեմ դանդաւոր արվում և Անգրկովկասի Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարի լիազորի վարչության հարկային բաժնին:

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի  
Նախագահի Տեղակալ՝

Ա. Մռավյալ

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի  
Քարտուղար՝

Գ. Պարզյան

Հր. «Խորհրդային Հայաստան»

1923 թ. Հունվարի 31, № 21

